ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1549

08.06.2015թվ.

ՀՀ ոստիկանության պետ,

գեներալ-լեյտենանտ

պարոն Վ. Գասպարյանին

Մուտք 3727 10 06 2015թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

2009թ-ին Դիտորդական խումբը, հաշվի առնելով մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների վերաբերյալ ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց և նրանց հարազատների իրազեկությունը բարձրացնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև հասարակական պահանջը, նախաձեռնել և հրապարակել էր <<Ի գիտություն ձերբակալվածներին և նրանց հարազատներին>> պաստառները: Պաստառով հնարավորություն էր ընձեռնվում հասարակությանը իրազեկել իրենց իրավունքները և ծանոթացնել Դիտորդական խմբի գործունեությանը:

Դիտորդական խմբի միջնորդությամբ նախկին ոստիկանապետը տվել էր իր համաձայնությունը և համապատասխան տարածքային ստորաբաժանումների աջակցությամբ պաստառները փակցվել էին ինչպես ՁՊՎ-ի խցերում, այնպես էլ ոստիկանության բաժնում՝ քաղաքացուն հասանելի տեղ:

Սակայն՝ Դիտորդական խումբը իր հերթական այցելության ընթացքում, արձանագրել էր, որ անհասկանալի պատճառներով, առանց որևէ մեկնաբանություն կամ պարզաբանում տալու հանվել են Դիտորդական խմբի բոլոր պաստառները, իսկ դրանց փոխարեն փակցվել են ՀՀ ոստիկանության կողմից հրատարակված պաստառներ, որտեղ անվանման տեղը նշված է ՀՀ ոստիկանություն, ընդհանուր պաստառի ամբողջ չափով նետնամասում պատկերված է ՀՀ ոստիկանության զինանշանը և պաստառի վերջում, նշված է Դիտորդական խմբի և Մարդու իրավունքների պաշտպանի անվանումները և համապատասխան թեժ գծերը:

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՈՒՏՔ № 2629

Խնդրում ենք Դիտորդական խմբի անդամներին պարզաբանել.

1. Թե ինչի՞ հետ է պայմանավորված և ինչո՞վ է հիմնավորվում Դիտորդական խմբի կողմից տրամադրված պաստառների հեռացումը համապատասխան տեղերից:
2. Ու՞մ հետ է եղել փոխհամաձայնություն և ո՞վ է տվել թույլտվություն ՀՀ ոստիկանության կողմից հրապարակված պաստառներում տպագրել Դիտորդական խմբի թեժ գծի համարը:
3. Չե՞ք կարծում արդյոք, որ այս ամենը ևս մեկ խոչընդոտ է այն բազմաթիվ խոչընդոտներից, որով .

   - Փորձ է արվում ապակողմնորոշել հասարակությանը՝ Դիտորդական խումբը ներկայացնելով որպես ՀՀ ոստիկանության մի մաս:
   - Փորձ է արվում խոչընդոտել օպերատիվ և արդյունավետ թեժ գծին ստացած ահազանգերի արձագանքին:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-1973 <<16>> 06 2015թ.

Ձեր՝ 08.06.2015թ. թիվ 2621/1549 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ տիկին Հ.Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներում ձերբակալվածների իրավունքների պաշտպանությունն ավելի արդյունավետ դարձնելու, վերջիններիս և նրանց հարազատների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով ՀՀ ոստիկանության շտաբի հերթապահ ծառայության վարչությունում մշակվել է իրավական ակտերից կազմված պաստառներ, որոնցում արտացոլված են ձերբակալման կարգը, ՁՊՎ ընդունելու հիմքերը, ՁՊՎ-ում պահվող անձանց իրավունքները և պարտականությունները: Նշված պաստառները տրամադրվել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչություններին՝ տարածքային ստորաբաժանումների նախասրահներում և ոստիկանության համակարգի գործող ՁՊՎ-ների խցերում փակցնելու համար, բնականաբար դիտորդների խմբի կողմից տրամադրված <<Ի գիտություն ձերբակալվածներին և հարազատներին>> պաստառները պետք է հանվեին, որպեսզի դրանց տեղում փակցվեին ոստիկանության կողմից պատրաստված պաստառները:

Հարկ է նշել, որ որևէ իրավական ակտով ոստիկանության վրա դրված չէ պարտավորություն դիտորդների խմբի կողմից տրամադրված պաստառները ՁՊՎ-ներում և բաժիններում փակցնելու վերաբերյալ:

Ինչ վերաբերվում է նշված պաստառներում դիտորդների խմբի թեժ գծի հեռախոսահամարը նշելուն, ապա դրա համար որևէ մեկի համաձայնության, առավել ևս թույլտվություն ստանալու անհրաժեշտություն չի եղել , քանի որ այն հանդիսանում է

դիտորդների խմբի թեժ գծի հեռախոսահամարը և հրապարակավ դրված է նաև խմբի պաշտոնական կայքէջում:

Ոստիկանությունը որևէ միտում չունի ապակողմնորոշելու հանրությանը՝ դիտորդների խմբին ներկայացնել որպես ՀՀ ոստիկանության մի մաս, առավել ևս խոչընդոտել թեժ գծին ստացած ահազանգերի օպերատիվ արձագանքման աշխատանքները: Ընդհակառակը, ձերբակալվածների իրավունքների խախտումների վերաբերյալ ստացված ահազանգերին արագ արձագանքելու նպատակով ոստիկանությունը պաստառներում զետեղել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի թեժ գծի հեռախոսահամարը:

Հասարակությունը իրազեկված է, որ ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը գործում է անկախ՝ ՀՀ ոստիկանության համակարգից դուրս:

ՀՀ ոստիկանության շտաբ